ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 26-Ա

«04» սեպտեմբերի - 2017թ. թիվ 7 արտահերթ նիստ

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 7 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Արամ Գրիգորյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Գարիկ Գևորգյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Նարեկ Սիմոնյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Վարդան Սիմոնյան | -------------------- | -------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ -------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թվականի սեպտեմբերի «04»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11 $^{00}$

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2017 թվականի
սեպտեմբերի 4-ի թիվ 7 արտահերթ
նիստի N 26-Ա որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1/ Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 7 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին.

2/ Գումար հատկացնելու մասին.

3/ Իրավաբանական անձանց համար ըստ գործառության նշանակության աղբահանության դրույքաչափեր սահմանելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 27 -Ա

«04» սեպտեմբերի - 2017թ. թիվ 7 արտահերթ նիստ

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի 2017 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» 0824 ծրագրի «Ներկայացուցչական ծախսեր» 4237 հոդվածից 134100 /մեկ հարյուր երեսունչորս հազար մեկ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել դպրոցական պայուսակներ, գրենական պիտույքներ և ֆուտբոլի գնդակներ փեռք բերելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի 2017 թվականի բյուջեի «Տեղական ինքնակառավարում» 0111 ծրագրի «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածից 14000 /տասնչորս հազար / Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել աղբահանության անդորրագրերի գրքույկներ ձեռք բերելու նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Արամ Գրիգորյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Գարիկ Գևորգյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Նարեկ Սիմոնյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Վարդան Սիմոնյան | ------------------- | ------------------- | --------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թվականի սեպտեմբերի «04»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11 [15]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 28 -Ն

«04» սեպտեմբերի - 2017թ. թիվ 7 արտահերթ նիստ

## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԸՍՏ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի, 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարի 01.08.2017թ. թիվ 01/18.1/4825-17 հանձնարարականի պահանջները.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքում գործող իրավաբանական անձանց համար ըստ գործառությային նշանակության սահմանել աղբահանության դրույքաչափեր՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

| | Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Յուրիկ Ասլանյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Արամ Գրիգորյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Գարիկ Գևորգյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Նարեկ Սիմոնյան | ------------------- | ------------------- | --------------- |
| Վարդան Սիմոնյան | ------------------- | ------------------- | --------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թվականի սեպտեմբերի «04»
գ. Լուսագյուղ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2017 թվականի
սեպտեմբերի 4-ի թիվ 7 արտահերթ
նիստի N 28-Ն որոշման

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԸՍՏ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1/ Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ 1 քառ.մ 10 դրամ.

2/ հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ՝ 1 քառ.մ 15 դրամ

3/ արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ՝ 1 քառ.մ 6 դրամ.

4/ կրթական մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ՝ 1 քառ.մ 3 դրամ: